

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/1

26 հունիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 31.05.2012թ-ի նիստում քննության է առնվել <Նյուլիթա> ՍՊԸ 07.05.2012թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 16.04.2012թ. թիվ 1206828 արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը թողնվել է անփոփոխ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2012թ. թիվ 14 որոշման համաձայն, սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.03.2012թ. թիվ 1206828 հանձնարարագրի, <Նյուլիթա> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում 16.04.2012թ-ին կազմվել է թիվ 1206828 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

<Նյուլիթա> ՍՊԸ-ի կողմից ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով 01.10.2011-31.12.2011թթ համար 06.03.12թ ՏՀՏ ներկայացրած դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձի ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 4.352.384 դրամ: Համաձայն Արարատի ՏՀՏ կողմից տրամադրած մնացորդների վերաբերյալ տեղեկանքի, ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 06.03.2012թ. դրությամբ կազմում է 10.859.868 դրամ:

Ներկայացված սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ընկերության ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմում է 117.167.425 դրամ, որին հասանելիք (20% հաշվարկային) ԱԱՀ-ի գումարը, համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, կազմում է 23.433.485 դրամ: Համաձայն 01.10.2011-31.12.2011թթ համար ընկերության կողմից ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի, հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմում է 4.352.384 դրամ: Նշված գումարից <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն, ենթակա չէ այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման 923.372 դրամ ԱԱՀ-ի գումար:

Այսպիսով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում դիմումով պահանջված 4.352.384 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդից ենթակա է սահմանված կարգով հաշվանցման և (կամ) վերադարձման 3.429.012 դրամը կամ ուսումնասիրությամբ չի հաստատվել 923.372 դրամ ԱԱՀ-ի գումար:

<Նյուլիթա> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ընկերության տարածքի բարեկարգումը (տարածքի հարթեցում, սալիկապատում) հանդիսանում է արտադրական պրոցեսի մի մասը, քանի որ անբարեկարգ տարածքում ավտոամբարձիչները, կռունկները և մնացած ծանր տեխնիկան շահագործելիս մի քանի անգամ մեծանում են դրանց վաղաժամկետ խափանումների, վթարների հավանականությունը: Նշված հանգամանքն իր հերթին խիստ բացասաբար է անդրադառնում Ընկերության արտադրողականության, ինչպես նաև ընդհանուր ֆինանսական արդյունքի վրա և պահանջում է լրացուցիչ ներդրումներ:

Բացի այդ, արտահանման համար նախատեսված արտադրանքի, որը կազմում է ամբողջ արտադրանքի մոտ 80%, բարձրագույն աշխատանքներն անբարեկարգ տարածքում դառնում են անհնարին, որը ևս պահանջում է լրացուցիչ ներդրումներ:

Տարածքի բարեկարգումն իրենից ներկայացնում է ոչ թե էսթետիկական, այլ խիստ արտադրական կարևորություն, քանզի այն ուղղակիորեն նպաստում է Ընկերության արտադրականության բարձրացմանը և հետագա անուղղակի հավելյալ ծախսերի կրճատմանը:

Ուստի ընկերությունը գտնում է, որ 923.372 դրամի ԱԱՀ-ի դեբետային մանցորդի վերադարձի գումարի մեջ (ընդամենը՝ 4.352.384 դրամ) ընդգրկելը միանգամայն հիմնավորված է:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռք բերված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով»:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ընկերության կողմից իրականացվում է հումքի (տրավերտին) արդյունահանման, վերամշակման և արտահանման գործունեություն:

Հաշվի առնելով, որ ընկերության տարածքի (այդ թվում ոչ արտադրական) սալիկապատման աշխատանքներն ընկերության գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման հետ կապված չեն կարող համարվել, հետևապես ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության դրույթներով սալիկապատող կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման և (կամ) վերադարձման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, կրկին անգամ ուսումնասիրելով սույն գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, գտնում է, որ արձանագրությունը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ «ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 16.04.2012թ. թիվ 1206828 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ